ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՏԱՆ-ԵՀՊԱՏ-2023/50 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «___» 2023 թվական

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս Նախարարության գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԻՆՍՏԻԳԵՅԹ ԴԻԶԱՅՆ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրենի Ժ/Պ Երանուհի Մարգարյանի, ում անունից 24.05.2023թ. տրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս Մարինե Մանուկյանը (նույնականացման քարտի համար՝ 013037882, տրված 24.02.2022թ., 007-ի կողմից), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N 1863-Լ (այսուհետ նաև՝ Որոշում), և ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշումները՝ 1043 բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) «11018 Պետական աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) իրականացումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Որոշման դրույթներով հաստատված կարգով Ծրագրի և Միջոցառման իրականացման շրջանակներում Կազմակերպությանը հատկացնել միանվագ պետական աջակցություն՝ Պայմանագրի 2.1 կետով սահմանված չափով, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է պահպանել Որոշման դրույթներով սահմանված պայմանները:

2. Պայմանագրի գինը

2.1. Սույն Պայմանագրով Կազմակերպությանը տրամադրվող միանվագ պետական աջակցության չափը կազմում է 29,714,113 (քսանինը միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար հարյուր տասներեք) ՀՀ դրամ:

2.2. Նախարարությունը պետական աջակցության շրջանակում տրամադրվող գումարը փոխանցում է Կազմակերպության հաշվարկային հաշվին:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

3.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, ՀՀ Կառավարության կամ վարչապետի, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4.Այլ դրույթներ

4.1 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

4.3 Պայմանագիրը կնքվում է Պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

4.4 Այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված կարգով սահմանված պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մինչև Պայմանագրի կնքումը, Պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինս չի համապատասխանում ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ N 1863-Լ որոշման պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Նախարարությունը միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար:

4.5 Սույն Պայմանագրի 4.4 կետով նախատեսված դեպքերով Պայմանագրի լուծման դեպքում Կազմակերպությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

4.6 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«ԻՆՍՏԻԳԵՅԹ ԴԻԶԱՅՆ» ՓԲԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,	ք. Երևան, Ավան, Ծարավ Աղբյուրի 134/1
ՖՆԱ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011040772	ՀՀ՝ 2050022160391001
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ՝ 00859631
Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան	Լիազորված անձ՝ Մարինե Մանուկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)